


Analytical Bulletin
**ISSN: 1829-4502**
**e-ISSN: 2953-8254**
**Journal homepage:** https://analytical-bulletin.cccs.am/index.php/ab/index

CENTER FOR CULTURE AND CIVILIZATION STUDIES FOUNDATION

*Arpine Sahakyan*
Fyodor Lukyanov (ed.). Russia and the Middle East: Viewpoints, Policies, Strategies. East View Press, 2019, 382 pp, $49.95

*Արփինե Սահակյան*
Ֆյոդոր Լուկյանով (խմբ.). *Ռուսաստանը և Մերձավոր Արևելքը. տեսակետներ, քաղաքականություններ, ռազմավարություններ*. East View Press, 2019, 382 pp, $49.95

**To cite this article:** Arpine Sahakyan. “Fyodor Lukyanov (ed.). Russia and the Middle East: Viewpoints, Policies, Strategies.” *Analytical Bulletin (CCCS)* 17 (2023): 69-77 DOI: 10.56673/18294502-23.17-69

**To link to this article: DOI:** 10.56673/18294502-23.17-69

Published online:

23 December

Submit your article to this journal

DOI 10.56673/18294502-23.17-69

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ֆյոդոր Լուկյանով (խմբ.). Ռուսաստանը և Մերձավոր Արևելքը. տեսակետներ, քաղաքականություններ, ռազմավարություններ (Fyodor Lukyanov (ed.). Russia and the Middle East: Viewpoints, Policies, Strategies. East View Press, 2019, 382 pp, $49.95 (hardcover), ISBN: 978-1-879944-75-6)

*DOI: 10.56673/18294502-23.17-69*
*Ներկայացվել է՝ 6 դեկտեմբերի 2023*
*Ընդունվել է՝ 26 դեկտեմբերի 2023*

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած Մերձավոր Արևելքը եղել է ԽՍՀՄ-ի, իսկ ապա՝ նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության կարևոր վեկտորներից մեկը: ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը մրցակցային պայքար էին մղում այս տարածաշրջանում գերիշխանության համար. յուրաքանչյուր կողմ փորձում էր հնարավոր բոլոր՝ գաղափարական, ֆինանսական, ռազմական միջոցներով իր գերիշխանությունը հաստատել այս կարևորագույն տարածաշրջանում:

ԽՍՀՄ անկումից հետո որոշ ժամանակ Մերձավոր Արևելքը դադարեց լինել Ռուսաստանի ակտիվ դիվանագիտական գոտի, քանի որ Ռուսաստանը, ներքին և արտաքին մի շարք բարդություններով պայմանավորված, բավականին սահմանափակ էր գործում: Սակայն Սիրիական ճգնաժամը լավ առիթ էր Ռուսաստանի՝ տարածաշրջան վերադառնալու համար:

Մերձավոր Արևելքի դերի մեծացումն ու Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ առանցքային վեկտոր դառնալը երևում է նաև ռուսաստանյան վերլուծաբանների հեղինակած հոդվածներից: Այս հոդվածների մի մասը անգլալեզու ընթերցողին

ներկայացնելու մտադրությամբ հավաքվել և մեկ ժողովածուի տեսքով տպագրվել է «Ռուսաստանը գլոբալ հարաբերություններում» (Russia in Global Affairs) ամսագրի խմբագիր Ֆյոդոր Լուկյանովի կողմից:

Այս ժողովածուն, որը կրում է «Ռուսաստանը և Մերձավոր Արևելքը. տեսակետներ, քաղաքականություններ, ռազմավարություններ» վերնագիրը, կազմվել է հետևյալ տրամաբանությամբ: Հեղինակը նախ ներառել է այն հոդվածները, որոնցում ներկայացվում են աշխարհի առջև ծառացած մարտահրավերները, օրինակ՝ կրոնների (մասնավորապես իսլամի) և բնական ռեսուրսների դերը ժամանակակից միջազգային հարաբերություններում:

Հոդվածների հաջորդ խումբը ներառում է ահաբեկչության և այլ մարտահրավերներին դիմակայելու ռուսական և միջազգային փորձը, փոխազդեցությունները, պատերազմներն ու վերաձևավորվող աշխարհի հնարավորությունները:

Եվ վերջապես, հոդվածների երրորդ խմբի հիմնական թեման Մերձավոր Արևելքն է՝ Արաբական գարունը, դրանից հետո տարածաշրջանում ձևավորվող աշխարհակարգը, զարգացման հնարավոր սցենարները, ճգնաժամերը և աշխարհաքաղաքական հավասարակշռության հասնելու հնարավորությունները: Ժողովածուն եզրափակում են Մերձավոր Արևելքում Սիրիական պատերազմի համատեքստում Ռուսաստանի դերը գնահատող հոդվածները:

Այժմ ավելի մանրամասն անդրադառնանք ժողովածուի կառուցվածքին և ներառված հոդվածներին:

Առաջին մասը, որը վերնագրված է «*Ռազմավարություն. Տարածաշրջանային խնդիրները գլոբալ հեռանկարում*», բաղկացած է **երեք ենթաբաժիններից՝** «Միջազգային անկայունության տասնամյակներ», «Իսլամը և իսլամիստական շարժումները» և «Էներգետիկա և բնական ռեսուրսներ»:

Առաջին ենթաբաժնում ներառված են Եվգենի Պրիմակովի երկու՝ «Միավորված ազգերի կազմակերպություն. մերօրյա մարտահրավերներ» (The United Nations: Challenges of our time) (էջ 5-13) և «Հիմնարար կոնֆլիկտ» (The fundamental conflict) (էջ 14-24) հոդվածները: Պրիմակովի այս հոդվածները պատահական չեն ընտրված: Ե. Պրիմակովը ՌԴ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս էր, ՌԴ առևտրաարդյունաբերական պալատի նախագահը, 1996-98 թվականներին՝ արտաքին գործերի նախարար, իսկ 1998-99 թվականներին՝ կառավարության ղեկավարը: Հետևաբար նրա հոդվածներում զուգորդվում են տեսականն ու պետական քաղաքականություն իրականացնողի հսկայական փորձը:

Առաջին հոդվածում Պրիմակովը ներկայացնում է ՄԱԿ-ի առջև ծառացած մարտահրավերները՝ միջազգային ահաբեկչությունն իր բոլոր հնարավոր կործանարար հետևանքներով, ահաբեկչական կազմակերպությունների դեմ միասնական պայքարի անհրաժեշտությունը՝ ընդգծելով ՄԱԿ-ի դերը և քննարկելով նրա՝ անվտանգության և կայունության սպառնալիքներին կոլեկտիվ պատասխան տալու մեխանիզմները: Պրիմակովը համաշխարհային հանրության առջև ծառացած լրջագույն սպառնալիքների շարքում թվարկում է նաև աղքատությունը, սովը, հիվանդությունները՝ առաջարկելով լուծման իր տարբերակները:

Հաջորդը Ալեքսանդր Դինկինի և Վլադիմիր Պանտինի՝ «Ժամանակակից դարաշրջանն ու 1970-ականների ճգնաժամը» (The modern era and the crisis 1970s) (էջ 25-34) հոդվածն է, որին հաջորդում է Վլադիմիր Օռլովի՝ «Չտարածման ապակե արգելոց» (The Glass Menagerie of Non-Proliferation) (էջ 35-48) հոդվածը:

Երկրորդ ենթաբաժինը նվիրված է իսլամի՝ 2010-ական թվականներին չափազանց արդիական դարձած հիմնախնդրին: Այստեղ ներառված են Բեռլինի Քաղաքակրթությունների երկխոսության հետազոտական ինստիտուտի

հետազոտությունների գծով տնօրեն Ալեքսեյ Մալաշենկոյի «Ուղենիշներ ջիհադի ճանապարհին» (Landmarks on the Road to Jihad) (էջ 51-59) և «Իսլամն այնպես, ինչպես մենք այն տեսնում ենք» (Islam as we see it) (էջ 72-84) հոդվածները, Ռաֆայել Խակիմովի «Իսլամի մոդեռնիզացում. որքանով է այն արժանահավատ» (The modernization of islam: how plausible is it) (էջ 60-71) և Վասիլի Կուզնեցովի «Իսլամական պետություն. այլընտրանքային պետականությու՞ն» (The Islamic state: alternative statehood?) (էջ 85-94) հոդվածները:

Մալաշենկոն առաջին հոդվածում ներկայացնում է իսլամի և քաղաքականության՝ հաճախ աննկատ թվացող կապը, իսլամիստներից եկող իրական և թվացյալ սպառնալիքները, հետխորհրդային տարածքում՝ մասնավորապես Կենտրոնական Ասիայում, քաղաքական իսլամի ձևավորման առանձնահատկությունները:

«Իսլամն այնպես, ինչպես մենք այն տեսնում ենք» հոդվածում հեղինակը ներկայացնում է ռուսական հասարակության վերաբերմունքն իսլամի նկատմամբ, որը, չնայած ՌԴ-ում մուսուլման բնակչության մեծաքանակ առկայությանը, այս կրոնը դիտարկում է որպես ինչ-որ հեռավոր, զուտ արևելյան երևույթ, և որն իսլամի մասին չափազանց մակերեսային պատկերացում ունի, ինչը, թերևս, ձևավորվել է ԶԼՄ-ների միջոցով: Սակայն միևնույն ժամանակ, օրինակ, ՌԴ քաղաքացի միլիոնավոր թաթարներին ռուսական հասարակությունը դիտարկում է որպես յուրայիններ՝ անտեսելով կրոնի գործոնը: Հոդվածում միաժամանակ ընդգծվում է ռուսական հասարակության մեջ իսլամի նկատմամբ քսենոֆոբիան, ներկայացվում է իսլամի նկատմամբ վերաբերմունքը ԶԼՄ-ներում և գրականության մեջ, միջին վիճակագրական ընթերցողի մոտ ձևավորվող պատկերացումները՝ միաժամանակ ցույց տալով «յուրային և օտար» իսլամի հակադրությունը:

Առաջին մասի երրորդ՝ էներգետիկ խնդիրներին վերաբերվող ենթաբաժինը սկսվում է Անդրեյ Բակլանովի՝ համաշխարհային տնտեսական անկայունության պատճառներից մեկը դարձած՝ նավթի գներին անդրադարձող «Նավթի գները. անհրաժեշտ է գործողությունների ռազմավարություն» (Oil prices: action strategy needed) (էջ 97-102) հոդվածով: Հաջորդը ՌԴ պետական գործիչ, Էներգետիկայի նախկին նախարար, ՌԴ կառավարության ղեկավարի տեղակալ Ալեքսանդր Նովակի «Հին նպատակներ, նոր խնդիրներ» (Old goals, new tasks) (էջ 103-114) հոդվածն է, որը նվիրված է միջազգային էներգետիկ համագործակցությանը՝ որպես ՌԴ գործունեության կարևոր ուղղության: Հոդվածում ներկայացվում են համաշխարհային էներգետիկ ոլորտի արդի մարտահրավերները՝ շուկայի հավասարակշռության խնդիրը, մրցակցությունը, միջուկային էներգետիկան, Ռուսաստանի ուժեղ և թույլ կողմերը այս ոլորտում:

Բաժինը եզրափակում է ՌԴ Տնտեսագիտության բարձրագույն դպրոց համալսարանի Համաշխարհային տնտեսության և միջազգային քաղաքականության ֆակուլտետի դեկան Անաստասիա Լիխաչովայի «Ջուր և խաղաղություն» (Water and peace) (էջ 114-128) հոդվածը: Հոդվածում հեղինակը բարձրացնում է խմելու ջրի հետ կապված մրցակցության խնդիրը՝ որպես գլոբալ ռազմավարական մարտահրավեր, և շեշտում խմելու ջրի պաշարներով առատ ՌԴ-ի շահեկան դերը: Այստեղ ներկայացվում է Մերձավոր Արևելքում և Աֆրիկայի հյուսիսում խմելու ջրի սակավության խնդիրը և զարգացվում է դեռ 1990-ական թթ. Ջոն Է. Ալլանի կողմից ներմուծված՝ «վիրտուալ ջուր» հայեցակարգը, մանրամասն վերլուծվում են քվազիգաղութացման մերօրյա խնդիրները, ինչպես նաև անդրադարձ է կատարվում Ռուսաստանի միջազգային ռազմավարության համար ջրային ռեսուրսների օգտագործման ներուժին և դրա ճիշտ օգտագործման անհրաժեշտությանը:

**Ժողովածուի երկրորդ մասը վերնագրված է** «*Մարտավարություն և փոխազդեցություն. Նույն թակարդի մեջ ընկնելը*» և բաղկացած է **երկու ենթաբաժնից՝** «Ահաբեկչության դեմ պայքարը» և «À la guerre comme à la guerre» (թրգ. «Պատերազմում, ինչպես պատերազմում»): Այս մասում ներառված են ահաբեկչության դեմ պայքարին և հաղթահարման ուղիներին նվիրված մի շարք հոդվածներ: Առաջին ենթաբաժնում ներառված են խորհրդային և ռուսական դիվանագետ, արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Ադամիշինի «Սովորում ենք պայքարել միջազգային ահաբեկչության դեմ» (Learning to fight international terrorism) (էջ 133-141), Եվգենի Սատանովսկու «Պատերազմ առանց փոխզիջման» (A no-compromise war) (էջ 142-150) և Անատոլի Վիշնևսկու «Ժողովրդագրություն և ահաբեկչական սպառնալիքներ» (Demography and terrorist threats (էջ 160-170) հոդվածները:

Սատանովսկին իր հոդվածում անդրադառնում է ՌԴ տարածքում գործող ահաբեկիչների հիմնախնդրին և կարևորում այնտեղ ապրող մուսուլմանների դերը վերջիններիս դեմ պայքարում: Հոդվածում քննարկում են ահաբեկչության դեմ պայքարում ռուս-արևմտյան հարաբերություններում առկա երկակի ստանդարտները, երբ մի կողմը մյուսին հաղթելու համար կարողացել է համագործակցել տեղական «ազատագրական» շարժումների հետ: Հեղինակի հիմնական միտքն այն է, որ ահաբեկչությունը ազգ և տարածք չի ճանաչում, ուստի վերջինիս դեմ պայքարում փոխզիջում չպետք է լինի:

Ժողովածուի երկրորդ մասի երկրորդ ենթաբաժնում ներառված են Ալեքսանդր Գոլցի «Պատերազմ կանոնների դեմ» (Warfare against the rules) (էջ 173-182), Ալեքսեյ Արբատովի «Հաղթել պատերազմում՝ առանց խաղաղությունը կորցնելու» (Winning a war without losing the peace) (էջ 183-196), Ռուսլան Պուխովի «Ապագայի ապացուցման հիմք» (A proving ground for the future) (էջ 197-212) և Պրոխոր Թերինի

«Կարողությունների սահմանները» (The limits of capabilities) (էջ 213-222) հոդվածները:

Պուխովն իր հոդվածում անդրադառնում է Սիրիայում Ռուսաստանի օդային պատերազմին, դրանց արդյունքներին և ընդգծում է այն կարևոր փաստը, որ Սիրիան ՌԴ օդային ուժերի զարգացման համար կարևոր փորձ էր, որն հաջողությամբ հաղթահարվեց:

Ժողովածուի **երրորդ մասը՝** վերնագրված «*Մերձավոր Արևելքը՝ որպես համաշխարհային կարգի/անկարգության գործոն*», կազմված է «Արաբական գարուն. ժողովրդավարություն և հեղափոխություն», «Տարածաշրջանում կայունության հեռանկարները», «Աշխարհաքաղաքական ձևավորվող հավասարակշռություններ» ենթագլուխներից:

Առաջին ենթաբաժնում ներառված են Եվգենի Սատանովսկու «Հեղափոխությունները և ժողովրդավարությունը իսլամական աշխարհում» (Revolutions and democracy in the Islamic world) (էջ 227-243), Վերոնիկա Կոստենկոյի, Էդուարդ Պոնարինի և Պավել Կուզմիչովի «Ուրիշ ժողովրդավարություն» (A different democracy) (էջ 244-253) և Ալեքսանդր Ակսենյոնոկի և Իրինա Զվյագելսկայայի «Լսո՞ւմ եք հեղափոխության երաժշտությունը» (Listening to the music of revolution?) (էջ 254-265) հոդվածները: «Ուրիշ ժողովրդավարություն» հոդվածում հեղինակները ներկայացնում են արաբական աշխարհում ժողովրդավարության ընկալումները, ներկայացնում հասարակության մեջ կնոջ դերի և ժողովրդավարության մակարդակի ուղիղ կապը: Հոդվածում ներկայացվում է մի զարմանալի օրինաչափություն, որը ոչ մի այլ տեղ աշխարհում չի նկատվում. երիտասարդ սերունդն իր ծնողների և ավագ սերնդի համեմատ ավելի պահպանողական է՝ չնայած ծնողների համեմատությամբ առավել բարձր կրթական մակարդակին:

Երկրորդ ենթաբաժնում ընդգրկված են ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի «Ժողովրդավարություն, միջազգային կառավարում և ապագա աշխարհակարգ» (Democracy, international governance, and the future world order)(էջ 269-277) հոդվածը, Պյոտր Ստեգնիի «Մերձավոր Արևելք. Վերսա՞լ թե Վեստֆալիա» (The Middle East: À la Versalles or à la Westphalia) (էջ 278-293), Եվգենի Սատանովսկու «Ճգնաժամի և աղետի միջև» (Between crisis and catastrophe) (էջ 294-304) և Անդրեյ Կրիկկովիչի ու Յուվալ Վեբերի «Հետապնդել և սպասել» (Harass and hold out) (էջ 305-316) հոդվածները:

Երրորդ մասի վերջին՝ երրորդ ենթաբաժնում տեղ են գտել Դմիտրի Եֆրեմենկոյի «Բաբելոնի ջրերի մոտ» (By the waters of Babylon) (էջ 319-332 ), Անդրեյ Կորտունովի «Ռուսաստան. ուժեղ խաղացո՞ղ Մերձավոր Արևելքում» (Russia: the power broker in the Middle east?) (էջ 333-337) և ժողովածուի հեղինակ Ֆյոդոր Լուկյանովի «ԱՄՆ-ի դուրս գալը Սիրիայից կմեծացնի՞ Ռուսաստանի հետ հակամարտության վտանգը» (Will US pullout from Syria increase risk of conflict with Russia?) (էջ 338-341) հոդվածները: Լուկյանովն այս հոդվածում քննարկում է ՌԴ դերը սիրիական պատերազմի ընթացքում և առաջ քաշում մի միտք, որ եթե Սիրիան հաղթի պատերազմում, ապա կարող է գտնել նոր՝ ավելի ուժեղ և հարուստ դաշնակիցներ:

Ասվածից ենթադրվում է, որ ժողովածուն կազմվել է հստակ տրամաբանությամբ՝ նպատակ ունենալով 2000-ականների սկզբից ձևավորվող աշխարհաքաղաքական իրողությունների համատեքստում գնահատել Ռուսաստանի դերը, վերջինիս վերաբերմունքը Մերձավոր Արևելքի նկատմամբ, հնարավոր տեսակետները, վարվող քաղաքականությունը, ռազմավարությունները, որոնք երբեմն հենց պետական քաղաքականության դրսևորում կարող ենք անվանել, քանի որ հոդվածների հեղինակներն են Եվգենի Պրիմակովը, Ալեքսանդր Նովակը, Սերգեյ Լավրովը և այլ կարևոր պաշտոնատար անձինք,

որոնք հանդիսացել և հանդիսանում են ՌԴ արտաքին քաղաքականության իրականացնողներ: Այս հեղինակները ներկայացնում են աշխարհաքաղաքական մի շարք բարդ հիմնախնդիրներ և փորձում են առաջարկել հնարավոր լուծումներ՝ մասնավորապես, թե ինչու, օրինակ, Ռուսաստանն ընտրեց Սիրիան՝ որպես գերտերություն ներկայանալու համար, արդյոք ՌԴ և արևմտյան շահերը բախվում են Մերձավոր Արևելքում, ինչպիսի հնարավոր հետևանքներ ունի միջազգային ահաբեկչությունը և դրա դեմ պայքարը, ինչպիսին կլինեն Մերձավոր Արևելքում զարգացման հնարավոր սցենարները:

Ժողովածուն հետաքրքիր է Մերձավոր Արևելքում Ռուսաստանի քաղաքականությամբ, ահաբեկչության դեմ պայքարի, ջրի և էներգակիրների համաշխարհային հիմնախնդիրներով, ժամանակակից իսլամի դերով, «արաբական գարնան», տարածաշրջանում զարգացման հեռանակարներով հետաքրքրվող հետազոտողների, լրագրողների, ուսանողների և ընդհանրապես ընթերցողների լայն շրջանակների համար:

Աշխատանքը մեծապես կշահեր, եթե հեղինակը տար եզրույթների և կարևոր իրադարձությունների ծանոթագրություններ, ինչը անգլալեզու ընթերցողի համար առավել հասկանալի կդարձներ հոդվածների բովանդակությունը: Գիրքը կշահեր նաև, եթե խմբագիրը ընդլայնված ներածություն հեղինակեր՝ մանրամասն քննարկելով Ռուսաստանի արտաքին քաղաքականության մերձավորարևելյան վեկտորը և համատեքստավորելով գրքում զետեղված հոդվածները:

*Արփինե Սահակյան*
*հայցորդ, Արևելագիտության ֆակուլտետ, ԵՊՀ*
*arpine.sahakyan@ysu.am*